ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

10-րդ դասարան (տևողությունը՝180 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:
Այսօրվա քո հաղթանակը նվիրվում է սրբադասված զոհերի՝ Ծիծեռնակաբերդում թևածող հոգիների հիշատակին:
Հաջողությո՛ւն և հաղթանա՛կ:

Հանձնաժողովի նախագահ՝ /Ս.Աբազյան/

1.Ի՞նչն էր«Մեծ Բեզարածի» վտարման պատճառը վրացական արքունիքից(1759թ.): Ո՞ւմ է նվիրված «Դուն էն գլխեն իմաստուն իս» տաղը: Գրի՛ր մեկ քառատող և մեկնաբանի՛ր:

5մ.

2.Ըստ Աբովյանի՝ ինչն էր հայ երեխաների՝ մայրենի լեզվի նկատմամբ անտարբերության պատճառը(գրի՛ր Աբովյանի բառերով): Գրի՛ր Աբովյանի պատգամը հայ երեխաներին և զուգահեռ անցկացրո՛ւ Աբովյանի և մեր ժամանակների միջև: Սիրում և կարդո՞ւմ ես հայ գրականություն:

5մ.

3.Ըստ Սկյուտարի սոխակի՝ ո՞րն է ամենամեծ ցավը բանաստեղծի(մարդու համար ընդհանրապես) համար. ո՞ր բանաստեղծության մեջ է խոսում այդ մասին: Գրի՛ր համապատասխան քառատողը:

5մ.

4.Ի՞նչ զգացումներ է արթնացնում քո մեջ վաղվա օրը(Ապրիլ 24). պատմի՛ր Ծիծեռնակաբերդի մասին. վկայակոչի՛ր եղեռնազարկ հայ գրողների(առնվազն 5 հեղինակ): Խոսի՛ր նրանցից մեկի մասին(5-6 տող):

5մ.

Հանձնաժողովի նախագահ՝ /Ս. Աբազյան/